



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 88 Ս.ՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԳԱՅԻՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ, ԳԼՈՒՄԱՐՎԱԾ 1955 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը,
ՄԱՅՐ Ա.ԹՈՒՄ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ա. Խ. Ա. Հ. Խ Ն Խ Ս

Սեպտեմբերի 29-ին, ցերեկվա ժամը 12-ին Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովի հոգևորական և աշխարհական պատգամավորները հավաքվում են Վեհարանի բակում և հանդիսավոր թափոր կազմած, դիմում դեպի Ս. էջմիածնի Հոգևոր Ճեմարանի մեծ սրահը, որի կայանալու են Ազգային-եկեղեցական ժողովի նիստերը:

Ժողովը աղոթքով բաց է անում Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերազնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, որից հետո առաջարկում է մեկ բովենդ հոտնկալս հարգել հանգուցյալ Կաթողիկոս երջանկահիշատակ Տ. Տ. Գերոգ Զ. ի հիշատակը:

Այնուհետև Տ. Վահան արքեպիսկոպոսը ողջույնի սրտագին խոսք է ասում պատգամագորներին, խոսելով նաև Մայր Աթոռ Ա. էջմիածնի պատմական դերի, նրա հայրենասիրական և եկեղեցական գործունեության, ինչպես նաև նրա ներկա ու մերձավոր անելիքների մասին: Դիմելով պատգամավորներին, սրբազնը ցերմորին ողջունում է նրանց ու ցանկանում արդյունավետ աշխատանք այն մեծ գործում, որի համար նրանք էջմիածնն են եկել աշխարհի բոլոր ծագերից:

Սրբազնը իր խոսքի մեջ հանգուցյալ Գերոգ Զ. Կաթողիկոսի անվան հետ միասին հիշատակում է նաև վերջին տարիների ընթացքում վախճանված բարձրաստիճան եկեղեցականներ Մեծի Տանն Կիլիկի Կաթողիկոս Գարեգին Ա. ի, Կոստանդնուպոլիսի Պատրիարքական տեղապահ Տ. Գերոգ արքեպիսկոպոս Արևանյանի, Ելրոպայի Կաթողիկոսական պատվիրակ Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Մելքոնյանի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Ռուբեն արքեպիսկոպոս Մարմբյանի անունները և նորից առաջարկում է հոտնկալս հարգել նրանց հիշատակը:

Գերազնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի առաջարկությամբ ընտրվում են ժողովի գործադիր մարմինները հետևյալ անձնավորություններից:
Նախագահի փոխանորդներ.

1. Տ. Մամբրի արքեպիսկոպոս Միրոնան (առաջնորդ Եփիպտակալ թիմի).

23 Տարբերության մասին կողման Գալֆայան (առաջնորդ Հյուսիսային Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի):
- 24 Տ. Վագգեն հայոց կողման Պալճան (առաջնորդ Ռումինակալ և Բուլղարացայ թեմիրի):

Առենապետեներ:

1. Ակադեմիկոս Ավելասիր Իսահակյան (Վարպետ).
2. Ակադեմիկոս Մարտիրոս Սարյան.
3. Պ. Հրանտ Նասիպյան (Եգիպտոսից).
4. Պ. Սարգսի Քյուրքճյան (Լոնդոնից):

Քարտուղարություն:

1. Ծնորչք ծայրագույն վարդապետ Գալստյան (առաջնորդ Կաթողիկոսական պատուիրակ Ելլոպայի).
2. Պ. Հայկ Առաքելյան (Մայթ Աթոռի դիվանապետ).
3. Պ. Միքայ Դովլաթյան (Վրաստանի թեմից):

Խմբագրահան հանձնաժողով:

1. Տ. Սերովիք ծայրագույն վարդապետ Մանուկյան (Կաթողիկոսական պատուիրակ Ելլոպայի).
2. Պրոֆ.-դակուտ. Ա. Գ. Աբրահամյան.
3. Պրոֆ.-դոկտ. Ա. Ղարիբյան:

Մահդատային հանձնաժողով:

1. Տ. Հայկազուն վարդապետ Արրաջամյան (ներկայացուցիչ Երուսաղեմի Պատրիարքական Աթոռի).
2. Պ. Հմայակ Սեդրարյան (Մայթ Աթոռի ֆինանսա-տնտեսական բաժնի պետ).
3. Պ. Հայկ Առաքելյան (Մայթ Աթոռի դիվանապետ):

Ժողովը վարող գործադիր մարմինների ընտրությունից հետո նախագահ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը ժողովի ատենապետության է: Հրավիրում Պ. Սարգսի Քյուրքճյանին և խոսքը տալիս է Ծուս Պրավուլավ Եկեղեցու ներկայացուցիչ միտրոպոլիտ Պիտիրիմին, որը ոռուերեն լեզվով կարդում է Մոսկվայի և Զամայն Ծուսի Պատրիարք Նորին Սրբազնություն Ալեքսիի ուղերձը, որով նա իր մաղթանքներն ու օրհնությունն է հղում Ազգային-Եկեղեցական ժողովին՝ ցանկանալով նրան արդյունավետ աշխատանք: Ուղերձի թարգմանությունը կարդում է Հոգեշնորհ Տ. Գևորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը, որից հետո Հայտարարվում է ընդմիջում, որպեսզի Հայարավորություն տրվի մանդատային հանձնաժողովին իր պարտականությունները կատարելու:

Հնդմիջումից հետո ժողովը վերակառում է ժամը 2.15-ին: Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսը վերստին առաջարկում է հոգիոց ասել Արքանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Գ. Կաթողիկոսի հիշատակին:

Մանդատային հանձնաժողովը կողմից հայտարարություն են անում Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Արրաջամյանը և Պ. Հայկ Առաքելյանը: Տրված աեղեկագրից պարզվում է, որ Ազգային-Եկեղեցական ժողովի հրամիրված սիյունքահայության պատգամավորներից ներկա են 32 հոգի, ըստ հետևյալ ցանկի:

Կալիֆորնիայից

4 Հոգի

Ֆրանսիայից

5 "

Բուլղարիայից

3 "

Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմից

9 "

Երևանադեմից

2 "

Եգիպտոսից

3 "

Անգլիայից

2 "

Ռումինիայից

2 "

Կիլիկիայից

2 "

Սանոք. — Բացի գերոհիշյալ թեմերից, Կոստանդնովուլսի Պատրիարքարանի կողմից Ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորներ են լիազորված՝ գերաշնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Սիրումյանը, գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, բանաստեղծ Ավետիք Խաչակրանը, պրոֆ.-դոկտ. Աշոտ Գ. Արքահամյանը, Պ. Հրանտ Նասիլյանը և Պ. Լևոն Տեր-Ավետիսյանը: Ատրպատականի թեմի կողմից պատգամավորներ են լիազորված գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը և պրոֆ.-դոկտ. Աշոտ Պ. Արքահամյանը, իսկ Հովհաննեանի թեմի կողմից՝ գերաշնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Սիրումյանը:

Սովետական Միության հանրապետություններից ներկա պատգամավորների ընդհանուր թիվն է 108 հոգի, ըստ հետևյալ ցանկի:

Նոր-Նախիջևանի և Ռուսովի թեմից	18	հոգի
Աղրբեշանի և Թուրքեստանի թեմից	20	»
Վրաստանի թեմից	18	»
Շիրակի թեմից	19	»
Արարատյան թեմից	30	»
Էջմիածնից	3	»

Ընդամենը՝ 108 »

Փոխ-Նախագահ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Սիրումյանը հայտարարում է, որ սույն թվականի սեպտեմբերի 28-ին Մայր Աթոռում կայացած եպիսկոպոսական ժողովի որոշմամբ ատենապետության կազմի մեջ հրավիրվում են նաև երկու եկեղեցականներ՝ գերաշնորհ Տ. Վարդան արքեպիսկոպոս Գասպարյանը (Կալիփորնիայից) և գերաշնորհ Տ. Սիրու եպիսկոպոս Մանովյանը (Հարավային Ամերիկայից), որը և հավանության է արժանանում:

Մայր Աթոռ Ա. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի 1954 թվականի տարեկան և 1955 թվականի առաջին կիսամյա գործունեության մասին մանրամասն գեկուցում կարգաց Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիսի Ապա գերաշնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Սիրումյանը դիմելով պատգամավորներին՝ հայտարարեց, որ ժողովականները արտահայտվեն կամ հաստատեն գեկուցումը:

Այս կապակցությամբ պատգամավոր Պ. Տիգրան Մմսարյանը (Հյուսիսային Ամերիկայից) առաջարկ մտցրեց ընդունել զեկուցումը. գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը երկրորդեց, հոգեշնորհ Տ. Ս. Սերովիք ծալրագույն վարդապետը բարեփոխեց այն՝ ընդունել գոհունակությամբ և շնորհակալությամբ: Ժողովը միաձայնությամբ ընդունեց հետևյալ բանաձևը.

«1955 թվի սեպտեմբերի 29-ին, Մայր Աթոռ Ա. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական սրբադումար ժողովը, իր առաջին նիստում, լսելով Ա. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի մեկ և կես տարվա գործունեության մասին սունձնապես և ընդհանուրապես երջանկահիշատակ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի գործունեության մասին Վահան արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիսի գեկուցումը, գոհունակություն և շնորհակալություն հայտնելով կատարված աշխատանքների մասին, Ազգային-եկեղեցական ժողովը միաձայն հավանություն տվեց Վահան արքեպիսկոպոսի գեկուցմանը:

Պ. Վահան Երիցյանը առաջարկեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ֆինանսական հաշվետվության քննությունը հանձնել վերստուգիչ հանձնաժողովի վերաբննության: Պրոֆ. Ա. Արքահամյանը գտավ, որ դա անհնար է ներկա պայմաններում, իսկ գերաշնորհ Տ. Վազգեն արքազանն ավելացրեց, որ առաջիկա նորբնտիր Գերագույն Հոգևոր Խորհրդին կից կընտրվի ֆինանսական վերստուգիչ հանձնաժողովը, որը վերստուգման գործը կվատարի տարվե-տարի:

Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանն առաջարկեց գրավոր կերպով խորին շնորհակալություն հայտնել Սովետական Հայաստանի բարեխնամ հառավարության, որ այնքան մեծ հոգատարությամբ կատարել է Մայր Տաճարի վերանորոգությունը: Ժողովը ծափահարությամբ ընդունեց հետևյալ բանաձևը.

«Ազգային-եկեղեցական պատկառելի ժողովը սրտի ամենաանկեղծ զգացմունքներով և վառ երախտագիտությամբ լսեց Ս. էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգության մասին Հայրենի հարազատ կառավարության ցուցաբերած ազնիվ և հոգածու վերաբերմունքի մասին, որով պետական միջոցներով վերանորոգվել է ամրողությամբ Մայր Տաճարը, ամրացվել են գմբեթակիր շորս սյուները, վերակենդանացել են Հովհաննյանների 300-ամյա հնություն ունեցող որմանկարները։ Ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը իր սրտագին և ամենախոր շնորհակալությունն է Հայտնում այս առթիվ Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարության»։



ՊԱՏԻԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՓՈՐԸ ՈՒՂՂՎՈՒՄ Է ԳԵՐԻ ԺՈՂՈՎՔ ԴԱՀԼԻՑԸ

Ժողովի այս նիստի օրակարգն ավարտված լինելով, գերաշնորհ Տ. Մամրի արքեպիսկոպոս Սիրունյանը հայտարարեց, որ վաղը (սեպտեմբերի 30-ին) առավոտյան ժամը 10-ին կմատուցվի սուրբ պատարագ Մայր Տաճարում և կիատարվի հանդիսավոր հոգեհանդիսատ՝ ի հիշատակ երանաշնորհ Գեորգ Զ. Կաթողիկոսի, այնուհետև տեղի կունենա հայրապետական ընտրության նիստը։ Ժողովը ավարտվեց ժամը 4.45-ին։

Ա.Զ.Ա.ՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՔ ԴԻԱՎԱՆ

Նախագահություն՝

1. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ
2. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ
3. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՅԱՅԱՆ
4. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՅՅԱՆ

Ատենապետներ՝

1. ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ
2. ՄԻՌՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
3. ԱՎԵՏԻՔ ԻՄԱՀԱԿՅԱՆ
4. ՄՎՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
5. ՄԱՐԳԻՄ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ
6. ՀՐԱՆՏ ՆԱՍԻԹՅԱՆ

Քարտուղարություն՝

1. ՇՆՈՐՀՔ ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՅԱՅԱՆ
2. ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՄՐԱՏ ԴՈՎԱԹՅԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍ

Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստը կայացավ նեպտեմբերի 30-ին, նախ Հոգևոր Ծեմարանի դահլիճում և ապա Ս. էջմիածնի Մայր Տաճառում, այդ օրը մատուցված պատարագից և Ամենայն Հայոց հանդուցյալ Հայրապետ Տ. Տ. Գեորգ Զ. երջանկահիշտառակ Կաթողիկոսի համար կատարված հոգեհանգատից հետո, ցերեկվա ժամը 3-ին:

Նիստին իրման նոր ժամանած պատգամավորներ ներկա էին Հարավային Ամերիկայից Յ, Բուզարիայից Յ, Հնդկաստանից Հ Հոգի, Սովետական Միության թեմերի 108 պատգամավորներից ներկա էին 98 Հոգի:

Նիստը աղոթքով բաց է անում գերաշնչությամբ Տ. Վահան արքեպիսկոպոսը և Հայութարարում, որ Ազգային-եկեղեցական ժողովի երկրորդ նիստի օրակարգն է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությունը: Ապա նա ալելացնում է, որ Համաձայն Հայաստանյաց Առաքելական եկեղեցու Կանոնադրության, Հայաստանյաց Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները իրավունք ունեն բվեարկվելու որպես կաթողիկոսական թեկնածուներ: Նիստին ատենապետում էր Պ. Սարգսի Քյուրքճյանը (Լոնդոնից):

Տ. Վահան արքեպիսկոպոսը հայտնում է, որ Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ՝ ամենապատիլ Տ. Եղիշ արքեպիսկոպոս Տերտերյանը հատուկ նամակով հրաժարվում է որպես կաթողիկոսական թեկնածու քվեարկվելուց: Պատգամավորների խնդրանոր Տ. Ծնորչք ծայրագույն վարդապետը կարդում է Տ. Եղիշ արքեպիսկոպոս Տերտերյանի գրավոր հրաժարականը, որ ժողովն ընդունում է ի գիտություն:

Հնտրության կարգի շորջ բացված մտքերի փոխանակության ժամանակ քննարկության ենթարկվեց այն հարցը, թե Կաթողիկոսն ընտրվելու է լոկ ներկա եղող եպիսկոպոսներից, թե՝ բացակա եպիսկոպոսներն ևս պետք է նկատել թեկնածու:

Թեր և գիմ կարծիքների փոխանակումից հետո ժողովը որոշեց պահպանել Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հնավանդ սովորությունը և ընտրությունը կատարել Հայաստանյաց Եկեղեցու բոլոր եպիսկոպոսների ցանկի վրայից:

Հարց է առաջանում այն պատգամավորների իրավունքի մասին, որոնք միաժամանակ լիազորված են երկու և ավելի թեմերից Տ. Մամբրի արքեպիսկոպոս Գալֆայանը և մյուսները բացատրում են, որ յուրաքանչյուր պատգամավոր իրավունք ունի ներկայացնելու մեկ թեմ և ունենալ մեկ ձայն՝ ըստ իր ընտրության:

Օրվա ատենապետ Պ. Ս. Քյուրքճյանը հայտարարում է վիճաբանություններն ավարտված: Տրվում է ընդմիջում մինչև ընտրություններն սկսվելը:

Հնդմիջումից հետո պատգամավորները, թափոր կազմած, ուղևորվում են Մայր Տաճար՝ կաթողիկոսական ընտրություն կատարելու Մայր Տաճարի մուտքի մոտ գերաշնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Միրունյանը, գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլայանը և Պ. Հայկ Առաքելյանը ստուգում են պատգամավորների մանաժամները, որից հետո նրանք ներս են թողնվում, Տաճարի դռները փակվում են և կողմնակի ոչ մի մարդ, բացի պաշտոնական պատկերահաններից, չի մնում ներսում: Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու կանոնադրության համաձայն կարդացվում են Հայաստանյաց Եկեղեցու բոլոր 21 եպիսկոպոսների անոմնները, որոնք իրավունք ունեն բվեարկվելու իրեն Ամենայն Հայոց Կաթողիկոսության թեկնածուներ:

Գերաշնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Միրունյանը կարդում է պատգամավորների երդումը, որը ներկաները կրկնում են հոտնկայս և խմբովին:

Հնարկում է երեք հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ նկարչ-ակադեմիկոս Մարտիրոս Մարյան, Պ. Հրանտ Նասիպյան և Պ. Տիգրան Պոյաճյան: Պատգամավորներին տրվում են Գերագույն Հոգեորհություն կնքված գլեաքարտեր:

Քվեաբուժի մոտ տեղ են գրավում Տ. Մամբրի արքեպիսկոպոս Միրունյանը և Տ. Գերենիկ եպիսկոպոս Փոլայանը: Քարտուղարության անդամներ Տ. Ծնորչք ծայրագույն վարդապետը և Պ. Հայկ Առաքելյանը կարդում են

պատգամավորների ցուցակները և պատգամավորները մեկ առ մեկ մոտենում են քվեատուփին և նրա մեջ գցում քվեաբարտերը: Քվեարկության մասնակցում են նիստին ներկա գտնվող բոլոր 137 պատգամավորները՝ այդ թվում 39 պատգամավոր արտասահմանից և 98 պատգամավոր Սովետական Միության թեմերից:

Քվեարկությունն ավարտվում է ժամը 5.30-ին: Քվեատուփը բացվում է և գերազնորհ Տ. Մամբրի արքեպիսկոպոս Սիրունյանը բարձրաձայն կարդում է բոլոր քվեաբարտերը:

Քվեարկության արդյունքների հաշվառումից պարզվում է հետևյալը.

S. Վազգեն Եպիսկոպոս Պալճյանն ստացել է 125 ձայն.

S. Գրիգոր Արքեպիսկոպոս Խաչատրյանը՝ 6 »

S. Վահան Արքեպիսկոպոս Կոստանյանը՝ 2 »

S. Մամբրի Արքեպիսկոպոս Գալֆայանը՝ 1 »

S. Մամբրի Արքեպիսկոպոս Սիրունյանը՝ 1 »

S. Տիրան Արքեպիսկոպոս Ներսոյանը՝ 1 »

Բացի այդ, մեկ քվեաբարտ տրվել է առանց նշման:

Ընտրությունից հետո Տ. Մամբրի արքեպիսկոպոս Գալֆայանը ժողովի կողմից շնորհավորեց նորմատիվ Կաթողիկոսին և երկար կյանքի ու բեղմնավոր գործունեության բարեմաղթություններ արեց: Եպիսկոպոսները ողջագուրեցին նորմատիվ Հայրապետին: Այնուհետև բոլոր պատգամավորները երգեցին «Էջ Միածինն ի Ճօրէ» շարականը: Այս միջոցին Մայր Տաճարի կոչնակները ի լոր բոլորի ավետեցին նոր Հայրապետի ընտրությունը:

Ընտրության արդյունքը հոչակելիուց անմիջապես հետո, նորընտիր Կաթողիկոսը խոսք առնելով, շերմ հուզումով ասաց.

«Թույլ տվեք իմ շնորհակալության և ամենախոր երախտագիտության խոսքը ուղղել Ձեզ բոլորի այն մեծ վատահության համար, զոր ցույց տվիք իմ անձին հանդեպ Ձեր հվեաներովք»:

Ապա վեհափառ Հայրապետը արտասանեց հետևյալ աղոթքը.

«Տէր Աստուած հարցե մերոց. ուս' ինձ առնել զկամն Քո և ուղիեազնացս իմ ի հանապարհն Քո արքարութեան. լի՛ր ինձ օգնական և մարտակից վասն շինութեան և անսասանութեան Մրոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց, վասն լուատորութեան և հոգոյ միսիրարութեան հաւատացեալ ժողովրդեան հայոց և վասն բարօրութեան Հայրենեաց մերոց: Եւ Քեզ վառ յափեանս, ամէն»:

Ապա նորմատիվ Հայրապետը «Պահպանիշով տվեց իր առաջին օրհնությունը և դրանով փակվեց Ազգային-եկեղեցական ժողովի ընտրական նիստը:

Պատգամավորները թափոր կազմած, դիմեցին գետի Վեհարանը և այն տեղ համբուրելով նորմատիվ Հայրապետի Աշը, արտահայտեցին իրենց բարեմաղթությունները:

Ա.Զ.Ա.Ց.Ի. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆ

Նախագահ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԱԶԳԵՆ Ա.

Նախագահություն՝

1. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ
2. ՄԱՄԲՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ
3. ՄԱՄԲՐԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ

Ատենապետներ՝

1. ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ
2. ՍԻՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
3. ԱՎԵՏԻՔ ԻՍԱԿԱԿՅԱՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
5. ՍԱՐԳԻՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ
6. ՀՐԱՆՏ ՆԱՍԻՊՅԱՆ

Քարտուղարություն՝

1. ՇՆՈՐՉՔ ԾԱՑՐԱԳՈՒՅՑՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՏՅԱՆ
2. ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՄԹԱՏ ԴՈՎԼԱԹՅԱՆ

ԵՐՐՈՐԴ ՆԻՍ

Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ նիստը կայացավ հոկտեմբերի 5-ին, Հոգևոր ծեմարանի մեծ դահլիճում, ցերեկվա ժամը 0.20-ին. Ներկա էին բոլոր պատգամավորները, ի թիվս որոնց Դամասկոսի թեմից նոր ժամանած Տ. Շավարշ Վարդապետ Գուլումճյանը և Կիլիկիո Կաթողիկոսության աշխարհական պատգամավոր Պ. Հրանտ Գրիգորյանը: Ժողովին նախագահում էր նորընտիր Վեհափառ Հայրապետը՝ Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Նիստն սկսվում է Վեհափառ Հայրապետի աղոթքով, որի ավարտից հետո նիստի ատենապետ Պ. Հրանտ Նասիլյանը (Եգիպտոսից) դիմելով Վեհափառ Հայրապետին, հայտնեց իր շնորհակալությունը իր նկատմամբ ցուցաբերած պատվի համար, որպես ատենապետի:

Ատենապետը հայտնեց իր վստահությունը, որ նորընտիր Հայրապետի կարող ղեկավարությամբ Մայր Աթոռ Ա. Էջմիածինը ամելի կծաղկի և առավել կամրապնդվի սիրութահայության և Մայր Հայրենիքի միասնականությունը:


Ապա խոսք է տրվում Վեհափառ Հայրապետին: Վեհափառ Հայրապետի հետ միասին ոտքի են ելում բոլոր պատգամավորները: Նորին Սրբությունը կարդում է իր ուղերձը, որը ներկա եղողներն ընդունում են խորին ակնածանությունը և բուռն ժափառարությամբ:

«Գերազնորի սրբազն հայրեր, հոգեշնորհ վարդապետ հայրեր, մեծարք պատգամավորներ,— հնում է Ամենայն Հայոց Հայրապետի ձայնը,— Թույլ տվեք, որպեսզի սրբազնա Ազգային-եկեղեցական այս ժողովին բերենք մեր հայրապետական ողջույնը և օրինությունը, անզամ մը ևս հայսենելով շնորհակալության Մեր ամենաշերմ զգացումները Զեր այն բարձր գնահատանքին և վստահության համար, զոր ընծայեցիք Մեզ:

Շնորհակալության խոսք ըստ բեկ ըեւ շատ բնական ու անհրաժեշտ է, և սպական այս պահուս և այս տեղին ուր կրտսելիք, խոսերը Մեզի կրվին անբավարար, և, նույնիսկ, անբովանդակ:

Թարձրանալով Խոսակորչի աստավածակառույց Գանին վրա, Մեր ուսերուն և Մեր հոգիին մեջ կզաքս խոռվիչ ծանրությունը հազար և վեց հայրյուր տարիներու, և կփորձենք ունենալ ապրում, զար մեր Փրկիչ Հիսուս ունեցավ Զիրենյաց լեռան վրա, երբ եր աղերսը ուզդելով երկնավոր լր Հոր, ըսավ. «Երէ հեար է՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս Դուռ: Վասնզի Մեր զիտակցության դռները ուժգորեն կրախեն հետզինան մարմին առնու հարցումները; թե ի՞նչ պիտի կարողանան իրացործել Մեր այս առաքելության նախապարհին վրա, ինչպես պիտի կարենան դիմագրավել բազում դժվարությունները, որ Մեր շուրջը կալեկոնդվին, ինչպես պիտի հաջողինք պտղաբեր դարձնել Մեր աշխատանքը հօգուս Եկեղեցվո, հօգուս Ազգին ու Հայրենիքին: Ինչպես պիտի կարողանան կարգ-կանոնն ու օրինականությունն ամրապնդել Մայր Արքուն ներս ու Եկեղեցի Մեր բոլոր գործակիցներուն սեր և անշահախնդիր նվիրում դեպի մեր սուրբ գործը: Վեհապես, ինչպես պիտի կարողանան ստեղծել Մեր շուրջը, մեր Եկեղեցվո ծոցին մեջ, մեր նվիրապետական Արքուներու և քեմերու միջև՝ շինարար աշխատանքի մրենուրա՝ խաղաղության և ներդաշնակության:

Ամեն բանն առաջ Մեր հույսը Աստուծո վրա է: Կհավատանք ճախախնամուրյան և Ս. Հոգվո զորուրյան: Կհավատանք, թե Տերը պիտի ողորմի և պիտի օգնե իր Եկեղեցին, և պիտի փրկե զայն ամեն փորձություններ, ուժ, կար և իմաստուրյուն շնորհելով բոլոր անոնց, որ սուրբ սրբով և մատուր ձեռքերով պիտի նվիրվին մեր ժողովուրդի կյանքի նողեար վերաշինուրյան գործին: Այս վեհ զգացումը Մեր հոգիին մեջ՝ նամրա կելլենք, ժալելու համար մեր լուսարեակ նախնյաց ուղիով: Մեր երկրորդ պատվենք մեր Հայրենի պետուրյունն է: Սովետական Հայաստանի իշխանուրյունք մեր հարազատ Հայրենիքի հարազատ իշխանու-



ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԱՆՁՈՒՄ

Բյունն է: Մեր վերածնած երկրին մեջ, Սովետական իշխանուրյան ստեղծած օրինական և գործնական կյանքի պայմաններու շնորհիվ, Եկեղեցին ոչ միայն լրիվ ազատուրյունը կվայելե՛ իր կյանքը կազմակերպելու և զարգացնելու, այլ հանախ այդ իշխանուրյունը բարոյապես նեցուկ կհանդիսանա Մայր Արոռին: Եվ եթե Մայր Արոռը հոգեն և վարչա-ֆինանսական տեսակետներ կազմակերպական բերություններ ունի այժմ, պատճառները միայն ոչ միայն ներքին են: Մենք բոլոր իմաստուրյաւնը և կորովք պետք է ունենանք մեր գործի շուրջը՝ համախմբվելու ներշնչումով, անձնվիրուրյամբ և սրբուրյամբ զեղուն հոգեռականներ և աշխարհական գործակիցներ, առավելագույն շափով օգտվիլ կարենալու համար Պետուրյան ստեղծած բարենպատ պայմաններեն:

Վերշին փառավոր ապացույցը այս տեսակետն՝ կտեսնենք մենք բոլոր այս օրերուն, երբ Պետական իշխանուրյան նյուրական և տեխնիկական միջոցներով իրագործվեցալ Մայր Տաճարի վերանորոգումը: Այս պատմական գործը, որ ի կատար ածեց մեր Հայրենի պետուրյունը, նոր լույս իշեցուց ոչ միայն մեր դարավար Ս. Էջմիածնին վրա, այլ նոր լույս

ծարեցուց նաև մեր բոլորիս հոգիներեն ներս, և մենք այսօր հար ուժ, նոր լուս տռած կուսակրոշի անշեղ կանքեղեն, ամեն մեկս մեր տեղեն, ամեն մեկս մեր միջազներով ձեռք-ձեռքի տված, պիտի աշխատինք հաղթահարել մեր առաջ զլովս բարձրացնող ամեն տեսակի դժվարությունները՝ անսասան, ամբողջ, շեն և պայծառ պահելու համար մեր Ս. Եկեղեցին. մեր Մայր Արքո Ս. Էջմիածինը, մեր վերածնած ու ծաղկած Մայր Երկրի Սովորական Հայաստանի կենսատու արեկի ներքեւ:

Հայրական սիրո զգացումներով զեղում՝ չերմագին կոչ կաղղենք մեր բոլանդակ Եկեղեցին, Տան Կիլիկիո Կարողիկոսուրյան, Արքո Երուանդին և Կոստանդնուպոլսու մեր Պատրիարքուրյանց Արքուներուն, մեր թեմակալ գերաշնորհ առաջնորդներուն, մեր Եկեղեցվոր բոլոր սպասավորներուն և մեր ամբողջ հավատացյալ ժողովուրդին ու կմարքենք, որ անոնք անխախտ մնան իրենց հախնյաց հավատքին և ավանդուրյուններուն վրա, անխախտ մնան իրենց Եկեղեցափռուրյան և հայրենասիրուրյան զգացմունքներուն մեջ և միշտ բարձր պահեն հայ ժողովուրդի, Հայ Եկեղեցվոր միասնականուրյան Եկեղեցական դրոշը:

Մեր ուժը, մեր փրկուրյանք մեր միուրյան մեջ է: Այս վեմին վրա կանգնած ենք Մենք և պիտի շշարժինք: Եվ պիտի հաջողինք Մեր Եկեղեցանվեր և հայրենանվեր գործին մեջ, «զի Աստուած ընդ մեզ է»: Մեր այս հավատքի և ովստի խոսքը ընդունեցեք որպես Եվհրական ողջույն հայրաբետական և տարեկ Զեզ հետ մեր բոլոր Եկեղեցականներուն, մեր բոլոր հավատացյալներուն: «Ողջոյն տաշիք միմեանց ի համբոյր սրբութեան»: Թող հավետ անսասան մնան և օրհնելալ ըլլան Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Արքո Ս. Էջմիածինը և համայն ժողովուրդն հայոց»:

Ժողովականները կրկին հոտնկայս ծափահարությամբ ընդունեցին Վեհափառ Հայրապետի հավատավոր և խրախոսիլ խոսքերը:

Նորին Ս. Օծության ուղերձից հետո ատենապես հայտնում է, որ առ այսօր ստացված են շնորհավորության շուրջ 100 հնապարեր: Քարտուղարության անդամ Պ. Հայկ Առաքելյանը կարդում է նրանցից կարևորագույնները, որոնցից են Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի, Քենտրոնական արքական պատուի, Կիլիկիո Կաթողիկոսության Տեղապահ Տ. Խադ արքական պատուի, Կոստանդնուպոլսի Գարեգին Պատրիարքի, Երուսաղեմի Պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե արքական կողմէն Տեղաբերյանի, Բուլղարիայի Մինիստրությունի կողմէն Դավանանքի գործերի կոմիտեի նախագահ Կյուցյուկովի հեռագորերը: Այսուհետև ժողովից ցանկության համաձայն թվարկում է միայն անունները հեռագոր ուղարկողների, որոնց թվում էին թեմակալ առաջնորդներ կամ նրանց փոխանորդները, Եկեղեցական խորհուրդներ, դասք քաջանայից, հայտնի հասարակական գործիչներ և այլ անձինք:

Պատգամավորների առաջարկությամբ քարտուղարության անդամ Տ. Շնորհ վարդապետը կարդում է Աղքային-Եկեղեցական ժողովի առաջին և երկրորդ նիստերի արձանագրությունները, որոնք ընդունվում են ինչ-ինչ հավելումներից հետո:

Նիստի գլխավոր հարցն էր Հայաստանյաց Եկեղեցվոր Սահմանադրության քննարկությունը, որի մասին հիմնական գեկուցում անելու համար խոսք է տրվում Սերովար ծայրագույն վարդապետին: Նա զեկուցեց, որ այս նպատակի համար եպիսկոպոսական ժողովը մի առժամանակում էր նշանակել հետևյալ հինգ հոգեռորականներից՝ Տ. Մամրիք արքական պատուի, Տ. Վաղողի եպիսկոպոս, Տ. Դերենիկ եպիսկոպոս, Տ. Սերովի ծայրագույն վարդապետ և Տ. Շնորհ ծայրագույն վարդապետ: Ժամանակի սղության պատճառով հանձնախումբը առիթ չունեցավ գումարվելու, սակայն չուրաքանչյուր անդամ առանձինն ուսումնասիրեց այն և ունեցավ գաղափարի փոխանակություն և եկավ հետևյալ եղակացության: Սահմանադրության ծրագիրը թեև լուրջ կերպով ուսումնասիրված է, սակայն այն չի գոհացնում արտասահմանի թեմական պահանջները և պայմանները, դրա համար առաջարկվում է, որ այն հանձնվի նոր կաղմանկելիք Գերագույն Հոգեռոր Խորհրդին, որպես վերջինս

ավելի, լայն կերպով ուսումնասիրելուց հետո բերի Ազգային-եկեղեցական ժողովն ի վավերացումն:

Նիստի վերջին հարցն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նյութական ապահովական պահպանը: Այս մասին զեկուցելով՝ համար խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և մանրամասն պատմում է մի շարք միջոցառումների մասին, որ անհրաժեշտ են էջմիածնի բարգավաճման համար, օրինակ՝ Հոգևոր Ճեմարանի զորացում, տպարանի անհրաժեշտություն, հուշարձանների նորոգություն և այլն, «Ս. Էջմիածնի Տաճարի վերաբերմասը մեր բարեխնեամ կառավարության կենդանի օրինակը ավելի կրելադրե, որ նոյն վերաբերմունքը ցույց տանք մենք ալ մյուս եկեղեցիներու վերաբերմամբ», ասաց Վեհափառ Հայրապետն իր խոսքի վերջավորության, Վեհափառող ապա կու արեց, որ վերադարձող պատգամավորները կատարեն իրենց պարտքը՝ սփյուռքահայությանը բացատրելով այն անելիքների մասին, որ պիտի կատարի Մայր Աթոռի նորընտիր Գերագույն Հոգևոր Խորհուրդը: Այնուհետև Նորին Սրբությունը Հրահանգում է ատենապետին՝ հրավիրել Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական բաժնի վարիչ Պ. Սեղարյանին, որը տնտեսա-ֆինանսական բնույթի թվերով նկարագրում է Մայր Աթոռի նյութական վիճակի մասին, որպես ուղեցուց Ազգային-եկեղեցական ժողովի:

Պ. Սեղարյանը 1956 տարվա համար Մայր Աթոռի ընդհանուր մուտք ներկայացուց 1.294.000 ոռութիւն, իսկ որպես ընդհանուր ծախս՝ 1.075.000 ոռութիւն, Հոգևոր Ճեմարանի ընդհանուր ծախս՝ 485.000 ոռութիւն, «Էջմիածնի» ամսաթերթի ծախս 12 համարի համար՝ 312.000 ոռութիւն, օրացուցի ընդհանուր ծախս՝ 28.500 ոռութիւն: Որեմն Մայր Աթոռի 1956 թվի ընդհանուր ծախս նախատեսված է 1.900.500 ոռութիւն, գեղիցին՝ 606.000 ոռութիւն: Բաց աստի, Պ. Սեղարյանն ասաց, «Օգտվելով և ոգեսրովելով Զեր ներկայությամբ, մենք Զեր ուշադրության ներկայացնում մոտավոր ապագայում կատարելիք մեր մի շարք խնդիրների ծրագրերը, որ հույս ունենք իրագործել Զեր օգնությամբ: Ահա այդ ծրագիրը»:

Այնուհետև կարդացվում է նախահաշիվը խիստ կարևոր ծախսերի, որոնք շնորհանուր գյուղերի մեջ նյութական միջոցների բացակայության պատճառով:

1. Կենտրոնական ջեռուցում	300.000	ոռութիւն
2. Ջրի ծորակների անցկացում Վեհարանում,		
Ճեմարանում և բնակելի շենքերում	200.000	»
3. Ընթացիկ վերանորոգումներ՝		
ա) Ս. Էջմիածնի վանքում	100.000	»
բ) Ս. Գեղարդա վանքում	150.000	»
գ) Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի		
անվան եկեղեցում	120.000	»
դ) Ս. Հոփիսիմեի վանքում	100.000	»
ե) Խոր Վիրապում	100.000	»
դ) Բննիում	50.000	»
ե) Ս. Գայանեի վանքում	50.000	»
ը) Շողակաթի վանքում	50.000	»
Ընդհանուր՝ 1.220.000		»

Բարգեն վարդապետը խոսք առնելով հարց է տալիս. «Մենք ունինք «Հուսավորչի լուսմա» անվան տակ Մայր Աթոռին դրամական նվիրատուրք, արդյոք այդ կարգի գումարները ստացված են»:

Պ. Երվանդ Աղաջանյանը (Ամերիկայից) իր խոսքի նյութ է դարձնում տպարանի անհրաժեշտությունը Մայր Աթոռի համար և ամերիկահայ պատգամավորության անունից խոստանում տպարանական սարքավորում նվիրել Ս. Էջմիածնի նորընտիր Վեհափառի ընտրության առիթով: Ամերիկահայ պատգամավորության անդամներից Պ. Տիգրան Պոյաճյանը ավելի է մանրամասնում և հիշատակում, որ գնվելիք տպարանական սարքավորումը կպարունակի մեծ մամուլ «Էջմիածն» ամսագրի 16 էջերը միանգամայն տպագրելու կարողությամբ, երկու փոքր մամուլներ, տողաշար մեքենա, կտրիչ, ծալիչ և հարակից գործիքներ: Ժողովը ծափահարությամբ է դնահատում ամերիկահայ պատգամավորության այս գովելի մտածումը»:

Պ. Քյուրքճյանն -առաջարկում -է ընտրել մի հանձնախոսմբ, որը պիտի դրադվի Մայր Աթոռի 1956 թվի նախահաշվի մեջ տեսնված դեֆիցիտը փակելու միջոցների մասին ժողովին կոնկրետ առաջարկներ բերելու համար։ Այս նպատակով ընտրվում է հանձնախոսմբ հետևյալ կազմով։

- Պ. Երվանդ Աղաջանյան (Ամերիկա),
- Պ. Սարգիս Քյուրքճյան (Լոնդոն),
- Պ. Հրանտ Նասիվյան (Եվրատոս),
- Պ. Հմայակ Սեղմարյան (Երևան),
- Պ. Գևորգ Եղիկարյան (Երևան),
- Պ. Սահակ Պաղչեճյան (Արգենտինա),
- Պ. Հայկ Նաշարյան (Կալկաթա)։



ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՐԸ ՀԱՇՎՈՒՄ Է ՔՎԵՆԵՐԸ

Այս հանձնախմբին հրահանգվեց մինչև հաջորդ նիստը (ուրբաթ, հոկտեմբերի 7-ին) մշակել համապատասխան ծրագիր և ներկայացնել ժողովին։

Ապա ամերիկահայ պատգամավորությունը առաջարկեց օրակարգի վրա դնել «կուսակրոնության հարցը», ժողովը այդ հարցը գտնելով հույժ բաղմակողմանի քննվելիք հարց, հարմար դատեց, որ նկատի առնվի բարեկարգական այլ ինդիրների կարգին, որոնցով զբաղվել են և հետագայում զբաղվելու են նպակուպսական ժողովը և Գերագույն Հոգառոր նորհուրդը։

Ազգային-հկեղեցական ժողովի երրորդ նիստը փակվեց ժամը 3-ին։

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԴԻՎԱՆ

Նախագահ՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ Ա.

Նախագահություն՝

1. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

2. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՅԱՆ

3. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՅԱՑԱՆ

Առենապետություն՝

1. ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ
2. ՄԻՌՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
3. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
5. ՄԱՐԳԻՄ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ
6. ՀՐԱՆՏ ՆԱՍԻԹՅԱՆ

Քարտուղարություն՝

1. ԾՆՈՐՀՔ ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՅԱՑԱՆ
2. ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՄԲԱՏ ԴՐՎԱԿՅԱՆ

ԶՈՐՈՐՈԴ ՆԻՍ

Ազգային-եկեղեցական ժողովի շորորդ նիստը տեղի ունեցավ Հոկտեմբերի 7-ին, ցերեկվա ժամը 10.30-ին, ճեմարանի բահլիճում։ Ժողովը բացվեց Վեհափառ Հայրապետի աղոթքով։ Օրվա ատենապետն էր Պ. Սարգսի Քյուրքճյանը, որը խոսք տվեց Պ. Երվանդ Աղաջանյանին՝ զեկուցելու Մայր Աթոռի 1956 թվականի բյուջեի դեֆիցիտը փակելու նյութական միջոցներ գտնելու համար կազմված հանձնախմբի անունից։ Հանձնախումբն առաջարկում է հետևյալ չորս միջոցները։

1. Պատգամավորները և ովհատավորները պետք է վճարեն այն ծախսերը, որ կատարել է Ս. Էջմիածինը իրենց ճանապարհածախսի և հյուրանոցի համար։ Այս ծախսերի վրա ավելացնել իրենց նվիրատվությունները Վեհափառ Հայրապետի օծման առթիվ ի նպաստ Մայր Աթոռի, ինչպես նաև կնքահայրության և Վեհափառի ամպհովանին կրելու առթիվ խոստացված նվիրատվությունները։

2. 1945 թվի Ազգային-եկեղեցական ժողովի կողմից որոշված 5%-ի հոգոր տուրքից բացի, յուրաքանչյուր եկեղեցի, իր համարության համաձայն, պնակ պատցնի եկեղեցու մեջ՝ հօգուտ էջմիածնի։ Գոյացած գումարը պիտի պահպանի առանձին և պարբերաբար ուղարկվի էջմիածնին, տեղական առաջնորդարանի միջոցով։

3. Տարվա մեջ մեկ օր անվանվի էջմիածնի օր և ամեն գաղութ, իր պայմանների համեմատ, ձեռնարկումներ կազմակերպի նյութական գումարներ ձեռք բերելու նպատակով։ Սույն գումարները հանձնել տեղական առաջնորդարաններին՝ Ս. Էջմիածնի տրամադրության տակ դնելու համար։ Հանձնախումբը Վեհափառ Հայրապետի օծման օրը առաջարկում է նկատել էջմիածնի օր, սակայն նրա վերջնական սահմանման կարգադրությունը կիրանի Վեհափառի կամքին։

4. Ազգային-եկեղեցական այս ժողովը հրամայի բոլոր առաջնորդական թեմերին, որ ըստ կարելվույն իրենց հոգուր և այլ տուրքերը դնեն Վեհափառ Հայրապետի տրամադրության տակ։

Զեկուցման շուրջը բացվում է մտքերի փոխանակություն և տրվում են հավելվածական լուսաբանություններ, որոնք շեշտում են յուրաքանչյուր թեմի բյուջեի 5%-ի հոգերոր տուրքի կանոնավոր վճարման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն մասին, որ վերոհիշյալ չորս կետերի շուրջը տեղական եկեղեցիներին տրվում են լայն հնարավորություններ, այդ կետերն իրագործելու համար՝ իրենց տեղական պայմանների համաձայն։

Ժողովը որոշում է զեկուցագիրն ընդունել և լավագույնս իրագործելու համար հանձնել ընտրվելիք Գերագույն Հոգմոր Խորհրդին։ Խոսք է ստանում Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը և Հայուստարոսմ, որ ինքը Կիլիկիո Կաթողիկոսության անունից խոստանում է հոգալ Ս. Հոփիսիմերի վանքի ընթացիկ վերանորոգության ծախսերը, իսկ Դիտրուտ բնակվող իր հարազատ եղբոր՝ Ստեփան Փոլատյանի օնդությամբ հանձն է առնում վերանորոգել Ս. Գայանեի վանքը։ Ժողովականները բուն ծափահարությամբ դիմավորեցին սրբազնի այս նշանակալի հայտարարությունը։

S. Շնորհք եպիսկոպոսը հայտնեց, որ հին եկեղեցիները նորոգելու լավագույն եղանակն այն է, որ ամեն մի թեմ ստանձնե մեկենասությունը որոշ մի եկեղեցու և խոստացավ իր երեսփոխանական ժողովին ներկայացնել հին եկեղեցիների վերանորդության հարցը և վստահություն հայտնեց, որ Կալիֆորնիայի թեմը կստանձնի մի եկեղեցու վերանորդության ժախսը: Մըբազանը հայտնեց նաև, որ Կալիֆորնիայի թեմից Մայր Աթոռին է բերլած 2.500 դոլար զանազան բարեպաշտ ազգայիններից:

Այնուհետև կարդացվում է երրորդ նիստի ամենագրությունը: Որոշվեց վավերացնել Ազգային-եկեղեցական ժողովի երրորդ նիստի արձանագրությունն անփոփոխ:



ՆՊԻՄՈՓՈՍՆԵՐԸ ՈՂԶԱԳՈՒԽՎՈՒՄ ԵՆ ՆՈՐԾՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՏ

Մի քանի պատգամավորների ստորագրությամբ ժողովին ներկայացված էին եկեղեցական բարեկարգության վերաբերյալ մի քանի հարցեր՝ նախագահության անդամ S. Մամրիկ արքեպիսկոպոս Սիրունյանը որպես լուսաբանություն պատասխանեց, որ եկեղեցական բարեկարգության վերաբերյալ բոլոր հարցերը արգել իսկ եպիսկոպոսական ժողովի քննարկության ներքեւ են, Ազգային-եկեղեցական ժողովը այս նստաշրջանի մեջ չի կարող դրադվել բարեկարգության վերաբերյալ հարցերով:

Հայտարարվում է ընդիշում ՅՈ բոլեկով:

Քննիչումից հետո ժողովը վերսկսեց իր աշխատանքները ցերեկվա ժամը 3-ին:

Ժողովի հաջորդ հարցն է՝ Գերագույն Հոգևոր Խորհրդի ընտրությունը: S. Մամրիկ արքեպիսկոպոս Սիրունյանը առաջարկում է ժողովին նկատի առնել բանաստեղծ-ակադեմիկոս Ավետիք Իսահակյանի և Պ. Ստեփան Կամսարականի կատարած ջերմագին աշխատանքները հօգուտ Ս. էջմիածնի և նրանց ընտրել իբրև պատվո անդամներ Գերագույն Հոգևոր Խորհրդի Առաջարկն ընդունվում է ժողովականների ծափահարություններով: Այնուհետև S. Մամրիկ սրբազանը ժողովին առաջարկում է ցուցակն այն անձանց, որոնց թեկնածությանը, որպես Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, արժանացել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Վագիկին Ա.ի հավանությանը.

Հոգեորականներ.

1. Միոն հպիսկոպոս Մանուկյան (Կաթողիկոսական պատվիրակ Հարավային Ամերիկայի).
2. Սահակ հպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան (ավագ լուսարար Ա. Էջմիածնի).
3. Վարդան հպիսկոպոս Տեր-Սահակյան (Խոստովի թեմի առաջնորդ).
4. Եղիշիկ հպիսկոպոս Աղճավորյան (առաջնորդ Բաքվի և Թուրքիստանի):

Աշխարհականներ.

1. Պրոֆեսոր Արարատ Ղարիբյան.
2. Պրոֆեսոր Առաքել Առաքելյան.
3. Պ. Արտաշես Տիրացյան.
4. Պ. Արամ Աղաջանյան (ուսուցիչ, ճեմարանավարտ):

Ֆինանսական վերատուգիշ հանձնաժողով.

1. Մաշտոց արեղա Թագիրյան (միաբան Ա. Էջմիածնի).
2. Պ. Գրիգոր Բերմեզյան (Հայրենադարձ Բեյրութից).
3. Պ. Եփրեմ Ալիքսանյան (Հաշվապահ):

Ժողովում Հայուսարարավեց, որ Պ. Ստեփան Կամսարականը ներկայումս ծանր հիվանդ է և զարմած է մահման: Որոշվեց ժողովի անունից երեք հոգուց բաղկացած պատգամավորությունը ուղարկել Պ. Կամսարականին այցելության, Հայունել նրան իր ընտրությունը որպես պատվու անդամ Գերագույն Հոգեորդությունը մասնակի հիվանդին:

Ժողովը որոշեց նաև ողջույնի հեռագիր ուղարկել Սովետական Միության Մինիստրների Սովետի նախագահին և Հայաստանի կառավարության, որն ընդունվեց բուռն ժամանակությամբ:

Օրակարգի բոլոր Հարցերը սպառված են: Ապա ոտքի է ելնում Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Վազգեն Ա. ը և ասում է իր փակման խոսքը, որ առավելաբար վերաբերում է Մայր Աթոռի զորացման համար իր ունեցած ծրագրերին և առաջադրությանը.

«Ընտրութենես ասդին ժամանակս գրեք ամբողջուրյամբ գրավված եղավ եկեղեցական հանդիսուրյուններով, ժողովներով և տեսակցուրյուններով, և շատ բիշ ժամանակ ունեցած են միտքեր ի մի ամփոփելու և լրիվ ծրագիր մը ներկայացնելու Ձեզի, սակայն այսի փորձեմ ուրվագծել այսպիսի ծրագիր մը: Կիուանեմ, որ Գերագույն Հոգեորդ Խորհուրդի հետ ավելի լրիվ ծրագիր մը կմշակենք»:

Վեհափառ Հայրապետ թիեց իր ծրագրերը, որոնք կտրելի է ամփոփել հետեւալ կետերի շրոջ:

1. Գեր տարին անգամ մը գումարել եպիսկոպոսական ժողով, զբաղելու համար կրնա-եկեղեցական և բարենորդչական ստիպողական հարցերով:

2. Գեր 4-կամ 5 տարին անգամ մը գումարել Ազգային-եկեղեցական ժողով: «Ո վիճակի եմ հայտարարելու, — ասաց Վեհափառը, — որ Հայրենի պետուրյունը պիտի տա բոլոր դյուռուրյունները պատգամավորեներուն՝ երեւելի համար»:

3. Մայր Արոր պետք ունի վերակազմուրյան՝ տեսեսական, վարչական և հոգևոր մարզերու մեջ: Ֆինանսական վերակազմուրյունը արդեն իսկ սկսած է: Կազմված է դիվանատուն և նշանակված է բարեխիլն պաշտոնյա մը ֆինանսական գործերու համար: Հոգեորդ տեսակետեն ընելիք բան շատ կա. պետք է ստեղծել վաճական կազմակերպուրյան բոլոր պայմանները, ստեղծել տիպար միարանուրյուն մը աղորքի և աշխատանքի սկզբունքներու վրա, տոգորված հեազանդուրյան, աղքատուրյան և ժումկալուրյան կանոններով: Այս հպատակներու իրազործման համար ծրագրած ենք աշխատակիցներ իրավիրել արտասահմաններ: Տպավորուրյունն այն է, որ Հայրենի բարեխնամ կառավարուրյունը սիրով պիտի տա հարկ եղած դյուռուրյունները:

4. Մայր Տաճարի հատակը մարմարապատել և զայն օժտել նոր Ավագ Սեղանով մը:— Այս կապակցությամբ Վեհափառ վատահուրյուն հայտնեց, որ Հայաստանի Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն և նարտարապետներ պիտի աշակցեն այս նպատակի իրագործմանը:

5. Ս. էջմիածնի Հոգեոր Ճեմարանը դնել ավելի լուրջ հիմքերու վրա, պատրաստելու համար իր կոչումին ավելի գիտակից հոգևորականություն: Ուրախ ենք նշելու, որ Ճեմարանը արդեն իսկ կարեց հաստպություն մը դարձած է, ունի մասնագետ դասավանդողներ: Մեր նպատակն է դարձնել լավը՝ լավագույն: Մեր արտասահմանի հոգևորականները, կիուսանք, որ Մեզի համար բանկագին օժանդակներ պիտի ըլլան նաև այս մարզին մեջ:




ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՆՈՐԾԵՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

6. «Էջմիածն» ամսարերը կծառայի իր նպատակին, կտանի Մայր Արոռի օրինությունները, Ս. էջմիածնի շինարար և հայրենասիրական խոսչերը թե՛ միուրենական Մեր ժողովուրդին և թե՛ արտասահմանի Մեր նոտին: Ամսարերը լավագույն պայմաններու մեջ լույս կտեսնե և կրաքարակ մեր պահանջները:

7. Մայր Արոռը աներածեշտարար պետք ունի տպարանի: Երջանիկ եմ այն խոստումով, որ ամերիկանայ պատգամավորությունը տվալ՝ օժտել Մայր Արոռը տպարանական լրիվ սարգվածքով: Կապասեմ այն երջանիկ օրվան, երբ «Էջմիածն» ամսարերի առաջին թիվը լույս պիտի տեսնե նոր տպարանն: Պիտի ընդարձակենք մեր տպագրական աշխատանքները, եկեղեցական և մշակութային գրեթերու հրատարակությամբ:

8. Մեր ծրագիրն է Մայր Արոռի կողքին կազմել տեսակ մը հոգևոր կանառ, բաղկացյալ լուրջ գիտեականներն, մեր եկեղեցական մատենագործյան նրատարակություններու կապակցությամբ: Այս գաղափարը կարող է լուրջ մշակման:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ՄԱԿԱՐԱԳՈՒՅԹ ԴՐԱԳԱՎՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Դ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀ ՄԱԿԱՐԱԳՈՒՅԹ ԴՐԱԳԱՎՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 1955 թ.)

9. Պիտի ունենանք մեր ուրույն եկեղեցական Սահմանադրությունը: Որոշումը, որ Ազգային-եկեղեցական ժողովը տվալ, լավագույնն էր, այսինքն Գերագույն Հոգեոր Խորհուրդի և եպիսկոպոսական ժողովի բնաւրկութենքն վերջ ներկայացնել Ազգային-եկեղեցական ժողովին մեր նոր Սահմանադրությունը: Հիները, թե՛ Պոլտանիան և թե՛ Ազգային Սահմանադրությունը ազգային ինքնուրույն եկեղեցիի մը Սահմանադրությունները չեն: Մեր նպատակն է ազատ պայմաններու տակ ունենալ մեր ինքնավար եկեղեցիի համար նոր Սահմանադրություն:

10. Մեր հարաբերությունը մեր Հայրենի պետական իշխանության հետ պիտի ըլլա ավելի քան բնականն և բարվու: Մենք հավատացած ենք, որ որքան մենք, նույնքան մեր Պետական իշխանությունը կցանկա Մայր Արռող տեսնել վերստին իր պատմական մեծ առաջելության մեջ:

11. Մեր հարաբերությունը մեր մյուս նվիրապետական Արռոներու և բեմերու հետ պիտի ըլլա սիրո, ի Քրիստոս միուրյան խորունկ սկզբունքի վրա: Մայր Արռող և մյուս արռոներու ու բեմերու հարաբերությունները պետք չեն ըլլան դիվանագիտական, այլ՝ պարզ, անկեղծ և եղբայրական սիրու մբեռութիւն մը մեջ: Կակեարկեմ հատկապես Մեծի Տաճան Կիլիկիո Կարողիկոսության, որուն շուրջ որոշ դժվարություններ կստեղծին: Ես կուգեմ հավատալ, որ Հայաստանյաց եկեղեցվո պարտանանաշ և գիտակից պաշտօնյաներ պիտի շառաջնորդվին կողմեակի նպատակներով, այլ՝ Հայաստանյաց եկեղեցվո միուրյան գերագույն և սրբազն սկզբունքը ամեն նկատառումն վեր պիտի դասնե: Դժվարություն ծագելու պարագային իսկ ես բացարձակ վստահություն ունիմ մեր հավատացյալ ժողովուրդի առողջ բնագդի վրա, որով նշանակած նաև պարագայի մեջ պիտի մնա միշտ: Սիրո, համերաշխության և եղբայրական ողջուն ունիմ Մեծի Տաճան Կիլիկիո Արռոնին, միաբանության և ամբողջ ժողովուրդին, Ս. Երուսաղեմի և Կոստանդնուպոլս Պատրիարքությանց, մեր բոլոր բեմերու և համայն հավատացյալ հայ ժողովուրդին:

12. Նյուրական օծանդակությունները և խոստումները, որոնք այս առիթիվ եղան, պայծառ պիտի պահեն Մայր Արռող իր բոլոր հաստատություններով: Ամերիկահայ պատգամավորներու և Տ. Դերենիկ եպիսկոպոսի կատարած խոստումներն զատ, Պ. Սարգիս Քյուրենյան (Լոնդոնին) և խոստացած է մեղվարութարանի մը հաստատման մեկենասն ըլլալ ի Գեղարդ: Շնորհակալություն բոլորին: Վստահ ենք, որ պիտի գտնվին ուրիշ պատվական անձնավորություններ ևս, որոնք պիտի ուզեն շինարար աշխատանք կատարել Մայր Արռոնին ներս և նպաստել իրենց նյուրական նվերներով անոր վերելիքին և պայծառությանը»:
Վեհափառը իր խոսքերը վերջացուց հետեւալ նշումներով.

«Քանի մը օրեն պիտի մեկնիք այստեղեն. վստահ եմ, որ մեր բաժանումը պիտի ըլլա իրապես բաժանում: Այստեղ զալով, Դուք Զեր զգացումներով և նոգիով կապիեցան Հայրենիքին: Մենք բոլորս կմնանք նոգեոր մեկ և նոյն միուրյան մեջ: Կամպեմ, որ մեր միուրյունը և սերը ավելի խորանա և մենք դառնանք իրապես մեկ հոտ և մեկ նովիլ: Խոսվեցավ հայրենադարձի մասին: Զեմ կրնար ավելի հայտարարություն ընել այս ուղղությամբ: Ես այս հարցին մեջ այն համոզումն ունիմ, որ հայրենադարձը փակված հարց մը չէ: Բայց ես այս առիթիվ պիտի ուզեի ակնարկը ուրիշ հայրենադարձի մը. այդ մեր նոգեկան հայրենադարձն է, այսինքն համայն հայ ժողովուրդին նոգիով կապվիլը Մայր Արռոնին և Մայր Հոդին»:

Ապա Վեհափառը իր գնահատանքը հայտնից ժողովի նախագահության, ատենապետներին և քարտուղարության՝ իրենց աշխատանքների համար, ինչպես նաև բոլոր ժողովականներին, որոնք միասնաբար և եղբայրորեն խորհեցին և ծրագրեցին, որպեսզի ստեղծվին պայմաններ Մայր Աթոռ Ս. էջմիածնի հետագա աշխատանքների համար: Մաղթեց բոլորին բարի ճանապարհ, «Տարե՛ք, — ասաց Վեհափառը, — Մեր հայրական սիրո ողջուները և օրինությունները Մեր համայն սիրեցյալ ժողովությին»:

Վեհափառ Հայրապետի աղոթքով և օրհնությամբ վերջ գտավ Ազգային-եկեղեցական ժողովի շորորդ և վերջին նիստը: Հավարտ ժողովի պատգամավորները խմբովին լուսանկարվեցին ճեմարանի դահլիճի առջև:

Ա.Գ.ԴԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳԻՎԱՆ

Նախագահ՝

ԿԱՐՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԱԶԳԵՆ Ա.

Նախագահություն՝

1. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ
2. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՅՅԱՆ
3. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՅԱՅՅԱՆ

Ատենապետներ՝

1. ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ
2. ՍԻՐՈ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
3. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
4. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
5. ՍԱՐԳԻՒՄ ՔՅՈՒՐՔՃՅԱՆ
6. ՀՐԱՆՏ ՆԱՍԻԹՅԱՆ

Քարտուղարություն՝

1. ՇՆՈՐՀՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՅԱՅՅԱՆ
2. ՀԱՅԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
3. ՄՄԲԱՏ ԴԱՎԻԴՅՅԱՆ

